ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՆԵՔՏԱՌԻՈՍ Կ. ՊՈԼՍԵՅՈՒ՝ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԵՐԲՈՂԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Աստվածաբանի հրաժարումից հետո, 381 թ., Նեքտառիոսը ընտրվում է Կ. Պոլսի Պատրիարք, և այդ պաշտոնին մնում մինչև իր մահը՝ 397 թ.:

Ծնվել է Կիլիկիայի Տարսոն քաղաքում «յազնիւ տոհմէ և հռչակաւոր առ ժամանակակիցսն առաքինի վարուքն և բարեմասնութեամբք»: Պատրիարքական Աթոռ բարձրանալիս տակավին մկրտված չէր, ինչը առաջ է բերում ժողովի մասնակից հայրերի լուրջ ընդդիմությունը: Սակայն տեղի տալով Թեոդոս կայսեր պնդումին, ընտրվում է:

Հույն Եկեղեցին Նեքտառիոսին կարգել է սրբոց դասը: Հիշատակը կատարվում է հոկտեմբերի 11-ին:

Եկեղեցական մատենագրությանը նա հայտնի է Ս. Թեոդորոս վկայի տոնի առիթով գրած Ճառով[1], որն առկա է նաև հայերեն թարգմանությամբ[2]: Հայերեն թարգմանությամբ մեզ է հասել նաև Նեքտառիոսի՝ Ստեփանոս Նախավկային ձոնված ներբողական խոսքը, որի հունարեն բնագիրն անհայտ է: Նեքտառիոս Պատրիարքի այս երկը պարունակող մեզ հայտնի միակ ընդօրինակությունն առկա է ՄՄ թիվ 1522 ձեռագրում (թ. 504բ-508ա), ուր նրան կցված է Ստեփանոս Նախավկայի նշխարների առաջին գյուտի պատմությունը, որն սկսվում է «Բայց աւն առեալ մեր զբանս ի պատմութիւն անդր նորա ձգեսցուք» բառերով (թ. 508ա-512ա):

Ըստ խորագրային տվյալի, այդ գյուտը տեղի է ունեցել Հովհաննես Երուսաղեմացու եպիսկոպոսության օրոք (386-417 թթ.): Ինչպես երևում է, այդ գյուտի առթիվ էլ Նեքտառիոս Պատրիարքը շարադրել է Ներբողը: Փարիզի Ազգային մատենադարանի թիվ 45 ձեռագրում Գյուտի պատմությունն ունի հետևյալ խորագիրը. «Մասնաւոր ինչ ի գիւտ նշխարացն Ստեփանոսի եւ որք ընդ նմա. Գամաղիէլ աւրէնդիրն որ ի Գործս առաքելոցն բարիոք խրատեաց զհրէայսն, եւ Նիկոդիմոս, որ ի Քրիստոսէ ի գրոյ եւ ի Հոգւոյ ասաց զար-

---

[1] Migne, PG, t. 39, col, 1821-1840, Գ. Ջարբհանալյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 632-633:

[2] «Սրբոյն Նեքտառեա Կոստանդինուպալսի եպիսկոպոսին, Ցաղագս տաւնի սրբոյ եւ ճգնազգեաց վկային Թէոդորոսի, զոր յառաջնումն շաբաթու Քառասնորդացն տաւնեն ամենայն հաւատացեալք Քրիստոսի ի փառս ամենասուրբ Երրորդութեանն» (Հրատ. Ա. Ց. Սրճունի), «Էջմիածին», 1975, Ժ, էջ 24-26: Երկը հայտնի է նաև վրացերեն, արաբերեն թարգմանություններով. CPG 4300:

քայութիւնն ընդունել, Նեքտառիոսի ասացեալ» ներբողը ունի հետևյալ սկսվածքը. «Որպէս ի Գործս առաքելոցն պատմի եւ ասի բան»[3]:

Հենվելով խորագրային այս տեղեկության վրա՝ կարելի է հաստատել, որ Գյուտի պատմությունը ևս պատկանում է Նեքտառիոսի գրչին: Ուստի և այն թիվ 1522 ձեռագրում ներկայացվել է իբրև շարունակություն Ներբողի: Վերջինիս սիրված, հանրաճանաչ լինելու մասին է վկայում այն իրողությունը, որ նրա մի շարք հատվածները ներառնվել են Ստեփանոս Նախավկային նվիրված Աթանաս Ալեքսանդրացու, Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, Պրոկղ Կ. Պոլսեցու համաբնույթ ճառերից կազմված մի խմբագիր Ճառում[4]:

Նեքտառիոս Պատրիարքի Ներբողը հրապարակվում է Ճշխարների գյուտի պատմության հետ միասին՝ իբրև մեկ ամբողջական միավոր, ինչպես այն ընկալված և ներկայացված է թիվ 1522 ձեռագիր Ճառընտիրում. *Ժամանակ՝* ԺԲ դ.: *Վայր՝* Հովհաննավանք (՞): *Գրիչ՝* Հովհաննես: *Ստացող՝* Ռուբեն քհն.: *Թերթ՝* 570: *Նյութ՝* թուղթ: *Մեծություն* 52,5 x 33: *Գրություն* երկսյուն: *Գիր՝* բոլորգիր: *Տող՝* 37[5]:

---

[3] Գ. Զարբհանալյան, Ճշվ. աշխ. էջ 633: Այս նույն խորագիրն ու սկսվածքն ունեն նաև Երուսաղեմի թթ. 145 (43ա-50ա), 609 (32բ-36բ) ձեռագրերը, Նորայր արքեպս. Պողարեան, Մայր Ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 411, հտ. Գ, Երուսաղեմ, 1968, էջ 6-7:

[4] Տե՛ս ՄՄ ձեռ. 2273, թ. 234ա-250ա, Երուսաղեմ, ձեռ. 609, թ. 1ա-32բ:

[5] Նկարագրությունն ըստ Ցուցակ ձեռագրաց, հտ. Ա, էջ 573-574: